Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՑ ՊԱՏԿԵՐԻ ՆՈՒԻՐՈՒՄՆ ՀԱՑ ԶՕՐԱԽՄԲԻՆ.

Անցեալ յուլիս ամսում, երբ Վեհափառ Կաթուղիկոսն ամենայն Հայոց անցնում էր Ապարանի վերայով Հաւիճու վանքը ամաւն այնտեղ անցկացնելու, Ղարաքիլիսայ գիւղում հանդիպեց 3րդ Կավկասեան տեղական պահեստի զօրախմբին, որը պատուով դիմաւորեց Նորին Օծութեանը։ Վեհապառ Հայրապետը իւր խրատական խօսքերը ասելով զօրաց, խոստացաւ իւր վերադարձին Ս. Էջմիածին ուղարկել զօրախմբին մի հրաշագործ պատկեր իբրև նուէր։

Ամսոյս 13ին Նորին Օծութիւնը բարեհաճեց մի պատկեր Ս. Աստուածածնայ որը 118 տարի պահուած էր Ս. Էջմիածնայ Տաճարում ուղարկել Երևան, ուր բնակեցրած է այժմ զօրախումբը, ձեռամբ գաւազանակիր Արժանապատիւ Սահակ Վարդապետի և ատենաւորի առանձին յանձնարարութեանց Մելիք-Ադամեանի։ Այդ անձինք, նոյն օրը Երևան գնալուն պէս յայտնեցին Երևանայ նահանգապետի պաշտօնակատար Ի. Ն. Խ. Զեխովսկուն իրանց տուած պատուէրի մասին յայտնելով թէ Նորին Օծութիւնը ցանկանում է, որ այդ պատկերը յանձնուի զօրախմբին 14ին նոյեմբերի, Նորին Մեծութեան թագուհի Կայսրուհւոյ ծննդեան օրն։ Պ. Զեխովսկին իսկոյն կարգադրեց ինչ որ պէտքն էր. 14ին նոյեմբերի, հանդիսաւոր մաղթանքից զլխի ուսաց և Հայոց եկեղեցիներում վասն կենաց և երկարակեցութեան Թագուհու և բոլոր Կայսերական Տան, 3դ Կավկասեան տեղական զօրախումբը ժողովուեց Ս. Սարգիս եկեղեցւոյ մօտ, ժամը 11½ին Թեմակալի փոխանորդ Դեր. Սուքիաս Եպիսկոպոսը զգեստաւորուած, ունելով մօտին Սահակ Վարդապետին, որի ձեռքին էր Վեհափառի Ս. նուէրը, հոգևորական դասի առաջնորդութեամբ, խաչ ու խաչվառով, մեծ հանդիսով դուրս եկաւ եկեղեցուց դէպի զօրքը, որը շարեշարք կանգնած էր. երաժշտութիւնն ածեց մաղթանքի երգը, և փառահեղ հանդէսը, որին հետևում էին Պ. Պ. Նահանգապետը, քաղաքագլուխը վարչութեան անդամների և իրաւասուների հետ, ոստիկանապետը, տեղական զօրքերի

հրամանատարները, վերատեսուչն գիմնազիայի՝ և բոլոր վարչութեանց մեծաւորները ու ահագին բազմութիւն ժողովրդականաց, անցաւ շարքով կանգնած զօրախմբի միջովը, Սրբազանը խաչակնքում էր զինուորներին, որոնք խորին ակնածութեամբ նայում էին այդ հանդիսին. ճանապարհը զարդարուած էր դրօշակներով։ Երբ հանդէսը հասաւ զօրանոցը, Եպիսկոպոսը կանգնեց և դարձաւ դէպի հայ զինուորներն, ասելով մի վերին ասպիճանի զգացուած, լի քրիստոնէական հոգւով, ճարտար ու գեղեցիկ քարոզ. Սրբազանը վերջացրեց իւր խօսքը այսպէս. «Կանոնաւոր և հաւատարիմ հայ զինուորներ, երբ մեր ամենողորմած Կայսրն կը կոչէ գործի, դուք խաչակնքելով ձեզ այս նուիրական սուրբ պատկերի առաջ, համարձակ գնայէք թշնամու դէմ յանուն ճշմարտութեան, սիրոյ դէպի անկեալ եղբայրները, ի փառս Ռուսիոյ Թագաւորին և Հայրենեաց»։ Հրամանատար զօրախմբի գնդապետ Բագիրևը իսկոյն ընդունեց Եպիսկոպոսի ձեռքից Ս. պատկերը, բարձրացրեց, ցոյց տուեց զօրքին և ասաց. «Զաւակունք, երբ մեր Թագաւոր Կայսրը կը բարեհաճի հրամայել մեզ գնալ թշնամու դէմ, մենք այս սուրբ պատկերի—Նորին Օծութեան պարգևի առաջ խաչակնքենք մեզ ու անվախ գնանք մեզ զոհելու Կայսեր և Ռուսիոյ համար.—Հուռա՜.—Թագաւոր Կայսրին, հուռա... հուռա... օդը թնդաց զօրաց հուռայով, իսկ երաժշտութիւնը ածում էր ազգային մաղթանքը. յետոյ գնդի հրամանատարը Գ. գոչեց. կեցցէ՛ շատ, հուռա՜, Վեհափառ Կաթուղիկոսը ամենայն Հայոց Տ. Տ. Մակարը, հայ զինուորները էլի թնդացրին օդը, ի վերջոյ հրամանատարը մօտեցաւ Սրբազանին և յայտնեց զինուորների կողմից շնորհակալութիւն այս ուրախալի օրուայ պատճառաւ. հասարակութիւնը հիացաւ ամենալաւ տպաւորութեան տակ և Ս. պատկերը խորին ակնածութեամբ բազմուեցաւ առանձին պատրաստած տեղում։ Եղանակը այդ օրը կարծես օգնում էր հանդիսի շքեղութեան։

Նոյն օրը երեկոյեան Նորին Օծութիւնը ստացաւ հրամանատար գնդապետ Բագիրևից հետևեալ հեռագիրը Երևանից.

«Զօրախումբը ընդունելով այսօր Եպիսկոպոսի ձեռքից Ս.

պատկերը, մեծաշուք Հանդիսիւ, մատուցանում է Ձեր Սրբութեան սրտագին երախտագիտութիւն այն թանկագին նուէրի համար, որի առաջին վերառաքեցինք առ Աստուած աղօթք Ձեր կենաց երկարութեան համար, թող Ձեր օրհնութիւնները լինին գրաւական ապագայում Ռուսիոյ զէնքի յաջողութեան թշնամիների վերայ»։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

ՔԱՂԱՔԱԿԱՆ—ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՆՈՐ—ԴԱՐ

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԸ

(*Եօթնե́րորդ տարի*) Թիֆլիսում

ԱՌԱՋԻԿԱՅ **1890** ԹՈՒԱԿԱՆԻՆ

կը հրատարակուի նոյն գիրքով եւ ծրագրով

Խմբագրութիւնը կոտանայ և սեպհական հեռագիրներ

Տարեկան գինն է 10 *րուբլի, վեց ամսուանը՝* 6 *րուբլի, հատով* 5 *կոպ., Եւրոպայի, Թուրքիայի, Ամերիկայի և այլ հեռաւոր երկիրների բաժանորդները վճարում են տարեկան* 30 *ֆրանկ.*

Բաժանորդ են գրվում իւրաքանչիւր ամսի 1*-ից միայն.*

Թիֆլիսում բաժանորդ են գրվում միմիայն «Նոր-Դար»-ի խմբագրատանը.

Խմբագրատունը գտնվում է Բարօնսկայա փողոցում, պօստ-հեռագրատան դէմ, տուն № 12.

Օտար քաղաքներից դիմում են խմբագրութեան՝ Тифлисъ въ Редакцію ежедневной газеты "НОР-ДАРЪ„ *կամ* Tiflis (Caucase) Rédaction du journal "Nor-Dar„.

Խմբագիր- հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ